ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
01 հոկտեմբերի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2015-16թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:*
   / զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. *2016-17թթ. ուստարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:*
   / զեկ. Մ. Ա. Զաքարյան /
3. *Կրթական ծրագրերի վերանայում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *2016-17թթ. ուստարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան /

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2015-2016 ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքնեևը, մասնավորաբար նշելով, որ բոլոր ուսանողներին հաջողվել է վերահանձնել լուծարքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը նշեց, որ լուծարքային շրջանի հաջող ավարտը պայմանավորված է դասախոսների կողմից անցկացված լրացուցիչ սեմինար-պարապմունքների առկայությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Խրախուսել դասախոսներին կազմակերպել լրացուցիչ սեմինար-պարապմունքներ նաև ուսումնական տարվա ընթացքում:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը անդրադարձավ 2016-2017 ուստարվա I ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների անկացման գրաֆիկին: Նա նշեց, որ 2016-2017 ուստարվա I ընթացիկ քննությունները և ընթացիկ ստուգումները անց են կացվելու սույն թվականի հոկտեմբերի 17-ից հոկտեմբերի 29-ը ընկած ժամնակահատվածում: Ուսանողներին տրամադրված են քննական և ստուգարքային բոլոր առարկաների հարցաշարերն ու տոմսերի (թեստերի) նմուշները:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

   ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2016-2017 ուստարվա I ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների անցկացման գրաֆիկը :

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ներ է մուծվել կրթական ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը և ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով կան կրթական ծրագրերի պատասխանատուներ. ՔԿԳ մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուն Կ. Հովսեփյանն է, իսկ ԻԿՄ-ը՝ Ա. Սիմոնյանը: Վերջիններիս հանձնարարվեց ձևավորել համապատասխան խորհուրդներ, որոնք կզբաղվեն կրթական ծրագրերի վերանայմամբ:

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կ. Հովսեփյանը նշեց, որ նշված խորհուրդները կձևավորվեն ինչպես ուսանողներից, այնպես էլ համապատասխան մասնագիտության

դասախոսներից, իսկ խորհուրդների աշխատանքները կղեկավարվեն գիտխորհրդի նախագահի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ-Կրթական ծրագրերի վերանայման համար ստեղծել մասնագիտական խորհուրդներ ՔԿԳ և ԻԿՄ մասագիտությունների գծով ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ. Զաքարյանի ղեկավարությամբ:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Քննարկվեց 2016-17թթ. ուստարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատումը: Մ. Ա. Զաքարյանը նշեց, որ "Մաթեմատիկայի և ընդհանուր բնագիտության" և "Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների" ամբիոնների նիստերում հաստատվել են կուրսային աշխատանքների թեմաները: Ուսանողները ընտրել են իրենց ղեկավարներին, կազմվել է ուսանողների և ղեկավարների հանդիպման գրաֆիկները: Ուսանողներին է տրված ամբիոնների կողմից քննարկված և հաստատված ամփոփիչ քննության հարցաշարը: Ուստարվա ընթացքում կկազմակերպվեն սեմինարներ ԻԿՄ 4-րդ կուրսի ուսանողների համար պարզաբանելու ամփոփիչ քննության հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Ցուցուլյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հետևել կուրսային, ավարտական աշխատանքների իրականացման ընթացքին:

ՆԱԽԱԳԱՀ **Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**